Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 26-06-2022 թ. որոշմամբ
««ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ -ՀԱՅԱՍՏԱՆ»»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՀԱՅԱՍՏԱՆ»»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Աբովյան փող., 52
1.3 Պետական գրանցման համարը		222.160.775992
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2013-07-16
1.5 ՀՎՀՀ-ն		02619914
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55181255
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.crrc.am
1.8 Էլեկտրոնային փոստը		crrc@crrc.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	19	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Սյունիքի երիտասարդական զարգացման ճամբար	2,854,080
	Համաշխարհային արժեքների հետազոտություն	12,511,596
	ԵՄ-ն հանուն երիտասարդների, ուսանողական ժողովրդավարություն հիմա	10,387,602

	Բաց տվյալների դասընթաց	3,100,384
	Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամ. կովկասյան բարոմետր	22,457,646
	Ազգային ժողովրդավարության ինստիտուտ. Հայաստանի սոցիալ-քաղաքական գործընթացների վերաբերյալ հարցում	25,654,407
	Միգրացիայի գնահատումը Կովկասում	9,734,190
	ՄԱԿ-Կանանց կառույց. Հայաստանում կանանց աշխատանքային իրավունքների և տնտեսական հզորացման հետազոտություն և շահերի պաշտպանություն	20,076,218
	Ձեռնարկատիրական գործունեությունից մուտքեր	87,541,658
	Բանկային ավանդներից մուտքեր	6,330,957
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Սյունիքի երիտասարդական զարգացման ճամբար	211,036	
Համաշխարհային արժեքների հետազոտություն	23,433,134	
ԵՄ-ն հանուն երիտասարդների, ուսանողական ժողովրդավարություն հիմա	11,102,174	
Բաց տվյալների դասընթաց	27,577,892	
Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամ. կովկասյան բարոմետր	12,030,626	
Ազգային ժողովրդավարության ինստիտուտ. Հայաստանի սոցիալ-քաղաքական գործընթացների վերաբերյալ հարցում	23,832,054	
Միգրացիայի գնահատումը Կովկասում	108,162	

ՄԱԿ-Կանանց կառույց. Հայաստանում կանանց աշխատանքային իրավունքների և տնտեսական հզորացման հետազոտություն և շահերի պաշտպանություն	24,718,022
Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն	107,177,283
Հանրային ընկալումները քաղաքացիական հասարակության կառույցների վերաբերյալ	3,624,629
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	534,163,025
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	233,815,012

Նշումներ՝

Կանոնադրության համաձայն ձեռնարկատիրական գործունեությունից ելքերը 2021 թվականի ընթացքում կազմել են 64,884,738 ՀՀ դրամ: Վարչական ծախսերից կատարվել է շենքի գնում, որը կազմել է 193,644,881 ՀՀ դրամ:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___41____թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններն
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան» հիմնադրամ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Գործունեության մասին հաշվետվություն	9
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

27 հունիսի 2022թ.

Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Մերի Շիհան

Խորհրդի նախագահ

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (պաշտոնաթող)

Էնդրյու Քոքսշել

Աուդիտի և ֆինանսների գծով հանձնաժողովի նախագահ

"Քեյ Փի Էմ Ջի" ՍՊԸ, բաժնետեր (պաշտոնաթող)

Աննա Օհանյան

Սթոնհիլ քոլեջի քաղաքագիտության և միջազգային հետազոտությունների ամբիոնի ղեկավար

Ուիլյամ Հանլոն

ՅՈՒՆԻՍԵՖ-ի Սուխումիի գրասենյակի ղեկավար

Դեանա Արսենիան

Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի փոխնախագահ

Հորթըն Բիիբի–Սենթըր

Եվրասիա Հիմնադրամի նախկին նախագահ

Թալար Կազանջյան

ՀԲԸՄ Հայաստան, գործադիր տնօրեն (նախկին)

Եվա Ավակյան

Սեյվ դը Չիլդրեն (ԱՄՆ) գենդերային հավասարության փոխնախագահի տեղակալ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Ծանոթ.	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ	4	200,030	3,698	416,607	7,076
Ոչ նյութական ակտիվներ		1,714	40	3,570	77
Ժամկետային ավանդներ	6	28,610	-	59,587	-
Այլ երկարաժամկետ ակտիվներ		149	-	310	-
		230,503	3,738	480,074	7,153
Ընթացիկ ակտիվներ					
Դեբիտորական պարտքեր	5	25,603	22,811	53,324	43,649
Ժամկետային ավանդներ	6	47,806	140,412	99,567	268,685
Տրամադրված փոխառություններ		-	13,000	-	24,876
Անավարտ ծառայություններ	7	22,556	23,157	46,978	44,312
Մնացորդներ բանկերում	8	40,118	311,472	83,555	596,016
		136,083	510,852	283,424	977,538
Ընդամենը ակտիվներ		366,586	514,590	763,498	984,691

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

	Ծանոթ.	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ և զուտ ակտիվներ					
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	5,651	1,903	11,769	3,641
		5,651	1,903	11,769	3,641
Ընթացիկ պարտավորություններ					
Կրեդիտորական պարտքեր	10	19,166	23,280	39,918	44,547
Հետաձգված եկամուտ	11	47,388	163,189	98,696	312,270
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		1,393	6,368	2,901	12,185
		67,947	192,837	141,515	369,002
Զուտ ակտիվներ	12				
Կուտակված արդյունք (անսահմանափակ)		292,988	319,850	627,947	681,267
Արտարժույթի փոխարկման պահուստ		-	-	(17,733)	(69,219)
		292,988	319,850	610,214	612,048
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		366,586	514,590	763,498	984,691

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. հունիսի 27-ին՝

Սոնա Բալասանյան
Գործադիր տնօրեն

Աննա Գրիգորյան
«Սմարտ Էմթի» ՍՊԸ
հարկային մասնագետ, գլխավոր խորհրդատու

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին հաշվետվություն

	Ծանոթ.	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
		2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհներից եկամուտ	13	154,752	76,507	307,163	156,392
Ծառայությունների մատուցումից եկամուտ	14	100,490	104,052	199,460	212,698
Ֆինանսական եկամուտ, զուտ		1,581	7,644	3,138	15,626
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	15	-	27,337	-	55,881
Այլ եկամուտ		44	-	87	-
Ընդամենը եկամուտ		256,867	215,540	509,848	440,597
Հատուցումներ աշխատակիցներին		(96,609)	(64,883)	(191,757)	(132,631)
Ծառայությունների գծով հատուցումներ		(79,466)	(40,728)	(157,730)	(83,254)
Վերլուծական և հետազոտական աշխատանքներ, կրթաթոշակ-ների գծով ծախսեր		(26,071)	(12,462)	(51,748)	(25,474)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս	15	(17,857)	-	(35,444)	-
Խորհրդատվական ծախսեր		(13,523)	(11,885)	(26,841)	(24,295)
Ներկայացուցչական ծախսեր		(10,889)	(920)	(21,613)	(1,881)
Գրասենյակային ծախսեր		(8,413)	(1,951)	(16,699)	(3,988)
Մաշվածություն և ամորտիզացիա		(7,103)	(2,204)	(14,099)	(4,505)
Ապահովագրական ծախսեր		(3,619)	(1,497)	(7,183)	(3,060)
Գործուղման և տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսեր		(3,591)	(2,374)	(7,128)	(4,853)
Բանկային ծախսեր		(2,664)	(560)	(5,288)	(1,145)
Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստներ		(93)	(268)	(185)	(548)
Այլ ծախսեր		(12,922)	(4,871)	(25,649)	(9,957)
Ընդամենը ծախսեր		(282,820)	(144,603)	(561,364)	(295,591)
Արդյունք մինչև հարկերը		(25,953)	70,937	(51,516)	145,006
Շահութահարկի գծով ծախս	16	(909)	(8,579)	(1,804)	(17,537)
Տարվա արդյունք		(26,862)	62,358	(53,320)	127,469

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար		
	Կուտակված արդյունք (անսահմա-նափակ)	Ընդամենը	Արտարժույթի վերագնա-հատման պահուստ	Կուտակված արդյունք (անսահմա-նափակ)	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	257,492	257,492	(17,020)	553,798	536,778
Տարվա արդյունք և համապարփակ եկամուտ	62,358	62,358	-	127,469	127,469
Ֆինանսական հաշվետվությունների վերաչափումից փոխարժեքային տարբերություններ	-	-	(52,199)	-	(52,199)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	319,850	319,850	(69,219)	681,267	612,048
Տարվա արդյունք և համապարփակ եկամուտ	(26,862)	(26,862)	-	(53,320)	(53,320)
Ֆինանսական հաշվետվությունների վերաչափումից փոխարժեքային տարբերություններ	-	-	51,486	-	51,486
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	292,988	292,988	(17,733)	627,947	610,214

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Տարվա արդյունք	(26,862)	62,358	(53,320)	127,469
Ճշգրտումներ՝				
Մաշվածություն և ամորտիզացիա	7,103	2,204	14,099	4,505
Շահութահարկի գծով ծախս	909	8,579	1,804	17,537
Շնորհներից եկամուտ	(154,752)	(76,507)	(307,163)	(156,392)
Ֆինանսական եկամուտ, զուտ	(1,572)	(7,644)	(3,138)	(15,626)
Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստներ	93	268	185	548
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	17,857	(27,337)	35,444	(55,881)
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(157,224)	(38,079)	(312,089)	(77,840)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(7,562)	(4,024)	(15,010)	(8,226)
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(3,979)	(11,308)	(7,898)	(23,115)
Անավարտ ծառայությունների փոփոխություն	601	(12,758)	1,193	(26,079)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(168,164)	(66,169)	(333,804)	(135,260)
Ստացված շնորհներ, զուտ	47,621	217,610	94,522	444,828
Վճարված շահութահարկ	(5,884)	(5,973)	(11,679)	(12,210)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(126,427)	145,468	(250,961)	297,358

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(205,109)	(1,556)	(407,116)	(3,181)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար վճարված կանխավճարներ	(149)	-	(296)	-
Ժամկետային ավանդների մարում	133,350	76,752	264,683	156,893
Ժամկետային ավանդների համալրում	(81,531)	(75,844)	(161,829)	(155,037)
(Տրամադրված փոխառություններ)/ փոխառությունների մարում	13,000	(13,000)	25,803	(26,574)
Ստացված տոկոսային եկամուտ	6,331	7,091	12,566	14,495
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(134,108)	(6,557)	(266,189)	(13,404)
Բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(260,535)	138,911	(517,150)	283,954
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(10,819)	15,346	(21,474)	31,370
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	26,163	(47,044)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	311,472	157,215	596,016	327,736
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	40,118	311,472	83,555	596,016

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» Հիմնադրամն (Հիմնադրամ) անկախ վերլուծական-ուսումնական կենտրոն է, որի նպատակն է ներազդել Հայաստանում հանրային քաղաքականության ու որոշումների ընդունման վրա՝ Հայաստանում և Հարավային Կովկասում հետազոտությունների և հասարակական գիտությունների խթանման միջոցով:

Հիմնադրամը հիմնադրվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից, որն իր հերթին հիմնադրվել է ԱՄՆ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող Եվրասիա հիմնադրամի կողմից: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2013թ. հուլիսի 16-ին:

Հիմնադրամն առաջարկում է քանակական և որակական հետազոտությունների արդյունքում ստացված բաց և հասանելի տվյալներ, մեթոդաբանական և կողմնորոշիչ դասընթացներ, դասախոսություններ, հետազոտական փոքր դրամաշնորհներ, ինչպես նաև գրադարանից օգտվելու հնարավորություն:

Հիմնադրամը համագործակցում է Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում գործող համանուն կենտրոնների հետ՝ հետամտելով հասարակագիտության և հանրային քաղաքականության վերլուծության խթանումը Հարավային Կովկասում:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2021թ. կազմել է 13 մարդ (2020թ.՝ 12 մարդ):

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Աբովյան փող., 25:

Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1: Հիմնադրամը գրասենյակային տարածքներ է զբաղեցնում Երևանի պետական համալսարանի շենքում: Այս տարածքը Հիմնադրամին տրամադրվում է անվճար և անժամկետ հիմունքներով:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով և ԱՄՆ դոլարով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթներն առավել օգտակար են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Ծանոթագրություններում բացահայտված որոշ տեղեկատվություն ներկայացված է միայն դրամով: Նման դեպքերում օգտագործողները պետք է հետևեն ծանոթագրություն 3.1-ին՝ համապատասխան տեղեկատվությունը ԱՄՆ դոլարով ստանալու համար:

Դրամով ներկայացված ֆինանսական հաշվետվություններն ԱՄՆ դոլարով վերահաշվարկման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.1-ում:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարբեր	*Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	*COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ. հունիսի 30-ից հետո*	*1 ապրիլի 2021թ.*
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՖՀՄՍ 17	*Ապահովագրության պայմանագրեր*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 4	*ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

Ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումն այլ արժույթով

Հիմնադրամի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից ԱՄՆ դոլարի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են ԱՄՆ դոլարի՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես զուտ ակտիվներում՝ արտարժույթի փոխարկման պահուստում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	50 տարի
Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	-	1-5 տարի
Տնտեսական գույք և այլ	-	5-8 տարի:

3.3 Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.4 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն

ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում կամ ֆինանսական եկամուտում, բացառությամբ ժամկետային ավանդների արժեզրկման և արժեզրկման հակադարձման, որոնք արտացոլվում են առանձին: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Սպասվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում

ընդգրկվող գործիքները ներառում են ամորտիզացված արժեքով չափվող ժամկետային ավանդները և դեբիտորական պարտքերը ։

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից։ Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա։

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամը հաշվառում է իր ֆինանսական ակտիվները (դեբիտորական պարտքերը և ժամկետային ավանդները)՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ։ Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը։ Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից։

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը։ Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 19-ում։

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով։

3.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկային հաշիվների մնացորդները, դրամական միջոցները՝ ճանապարհին և կարճաժամկետ ավանդները՝ 3 ամսից պակաս մարման ժամկետով։

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ։ Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով։ Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ։

3.6 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է։

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում։

Շնորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից որպես առանց նախապայմանների ֆինանսական օգնություն կամ որպես կրած ծախսերի կամ վնասների փոխհատուցում, ճանաչվում են տարվա արդյունքում, երբ դրանք դառնում են ստացման ենթակա:

Շնորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից, սակայն հաշվետու ամսաթվի դրությամբ չեն օգտագործվել ըստ նպատակայնության, ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ (ընթացիկ պարտավորություն) և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ այդ շնորհների օգտագործմանը զուգընթաց:

Ստացված շնորհների գծով ամբողջ եկամուտը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ, երբ այն դառնում է ստացման ենթակա, այսինքն՝ այն պահին, երբ Հիմնադրամը ստորագրում է իրավական պայմանագիր: Հետաձգված եկամուտը փոխանցվում է գործունեության մասին հաշվետվություն՝ շնորհին կից պայմանների իրականացմանը զուգընթաց: Ընդ որում, եթե հետաձգված եկամտի գումարը գերազանցում է Հիմնադրամի կողմից շնորհին կից պայմանների իրականացման համար պահանջվող գումարը, գերազանցող մասը նվազեցվում է հետաձգված եկամտի մնացորդից և համապատասխան դոնորի գծով դեբիտորական պարտքի մնացորդից: Այս ճշգրտման գումարը չի արտացոլվում գործունեության մասին հաշվետվությունում:

Հիմնադրամն իր ֆինանսական հաշվետվություններում չի ճանաչում դոնորներից ստացված գումարները, որոնք հետագայում պետք է փոխանցվեն համաշահառուներին, երբ այդ դրամաշնորհի օգտագործումը չի վերահսկվում Հիմնադրամի կողմից:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհների ճանաչման և հաշվառման ժամանակ Հիմնադրամի ղեկավարությունը կիրառել է դատողություններ, որոնք նկարագրված են ծանոթագրություն 18-ում:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական արդյունքի, ո՛չ էլ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման

կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.9 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում ծառայությունների մատուցումից և շնորհներից ստացված եկամտից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել եկամուտ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել եկամուտը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Եկամուտը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Հիմնադրամը ճանաչում է անբավարար կատարման պարտականությունների դիմաց ստացված հատուցման գծով պայմանագրային պարտավորությունները և այդ գումարները գրանցում է որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ կրեդիտորական պարտքեր տողում: Նմանապես, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցում ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կա՛մ պայմանագրային ակտիվ, կա՛մ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից եկամուտը ներկայացնում է Հիմնադրամի կողմից տարբեր հետազոտությունների, վերլուծությունների, հարցումների գծով մատուցված ծառայությունները: Այն ճանաչվում է պայմանագրային պարտավորությունների կատարմանը զուգընթաց՝ ըստ հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց ավարտվածության աստիճանի:

Հաշվետու ամսաթվի դրությամբ դեռևս չավարտված ծառայությունների հետ կապված բոլոր կատարված ծախսումների գումարներն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Անավարտ ծառայություններ»:

Շնորհներից եկամուտ

Այս եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.6-ում:

4 Հիմնական միջոցներ

	Հազար դրամ				ԱՄՆ դոլար			
	Շենքեր և շինություններ	Համակարգ-չային տեխնիկա	Տնտեսա-կան գույք, այլ	Ընդամենը	Շենքեր և շինություններ	Համակարգ-չային տեխնիկա	Տնտեսա-կան գույք, այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	18,950	5,001	23,951	-	39,504	10,425	49,929
Ավելացում	-	1,556	-	1,556	-	3,181	-	3,181
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	-	-	(3,446)	(855)	(4,301)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	20,506	5,001	25,507	-	39,239	9,570	48,809
Ավելացում	193,646	9,387	376	203,409	384,363	18,632	746	403,741
Օտարում	-	(95)	-	(95)	-	(189)	-	(189)
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	-	18,947	4,379	883	24,209
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	193,646	29,798	5,377	228,821	403,310	62,061	11,199	476,570

	Հազար դրամ				ԱՄՆ դոլար			
	Շենքեր և շինություններ	Համակարգ-չային տեխնիկա	Տնտեսա-կան գույք, այլ	Ընդամենը	Շենքեր և շինություններ	Համակարգ-չային տեխնիկա	Տնտեսա-կան գույք, այլ	Ընդամենը
Կուտակված մաշվածություն								
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	17,287	2,333	19,620	-	36,037	4,863	40,900
Տարվա հաշվարկ	-	1,661	528	2,189	-	3,395	1,079	4,474
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	-	-	(3,174)	(467)	(3,641)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	18,948	2,861	21,809	-	36,258	5,475	41,733
Տարվա հաշվարկ	-	6,729	348	7,077	-	13,356	691	14,047
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(95)	-	(95)	-	(189)	-	(189)
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	-	-	3,855	517	4,372
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	25,582	3,209	28,791	-	53,280	6,683	59,963
Հաշվեկշռային արժեք								
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,558	2,140	3,698	-	2,981	4,095	7,076
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	193,646	4,216	2,168	200,030	403,310	8,781	4,516	416,607

2021թ. ավելացումները ներառում են հետևյալը. Հիմնադրամի սեփական միջոցներով ձեռք բերված 2 տարածք նորակառույց շենքում՝ 193,646 հազար դրամ (ՀՌԿԿ-Հայաստան գրասենյակային տարածքի համար, որը պետք է վերանորոգվի, վերանորոգումը նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2022թ. օգոստոս ամիսը) և համակարգչային տեխնիկա և այլ պարագաներ՝ Եվրոպական միության դրամաշնորհային միջոցներով՝ 3,984 հազար դրամ, Միջազգային հարաբերությունների Ազգային Ժողովրդավարության Ինստիտուտի դրամաշնորհային միջոցներով՝ 1,025 հազար դրամ, Եվրասիա հիմնադրամի (ԱՄՆ) դրամաշնորհային միջոցներով՝ 152 հազար դրամ, ՄԱԿ-ի գենդերային հավասարության ու կանանց հզորացման միավորի դրամաշնորհային միջոցներով՝ 152 հազար դրամ, Հիմնադրամի սեփական միջոցներով՝ 4,450 հազար դրամ:

2020թ. ավելացումներում ներառված է Հիմնադրամի միջոցներով ձեռք բերված հիմնական միջոցներ՝ 1,556 հազար դրամ արժողությամբ:

5 Դեբիտորական պարտքեր

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայությունների մատուցումից դեբիտորական պարտքեր	13,482	10,208	28,079	19,533
Ստացվելիք շնորհների գծով դեբիտորական պարտքեր	3,625	8,547	7,550	16,355
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	-	13	-	25
Կանխավճարներ	8,496	4,043	17,695	7,736
	25,603	22,811	53,324	43,649

Կանխավճարներում ներառված 10,875 Բրիտանական ֆունտ ստեռլինգը (GBP) (համարժեք 7,168 հազար դրամին) վճարվել է Լոնդոնի համալսարանական քոլեջին Հիմնադրամի աշխատակիցներից մեկի ուսման համար (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո)

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

6 Ժամկետային ավանդներ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ				
Ավանդներ	28,808	-	59,999	-
Ավանդների գծով հաշվեգրված տոկոսներ	322	-	671	-
Ակնկալվող պարտքային կորուստ	(520)	-	(1,083)	-
	28,610	-	59,587	-
Ընթացիկ				
Ավանդներ	48,014	135,873	100,000	259,999
Ավանդների գծով հաշվեգրված տոկոսներ	135	5,309	281	10,159
Ակնկալվող պարտքային կորուստ	(343)	(770)	(714)	(1,473)
	47,806	140,412	99,567	268,685
Ընդամենը	76,416	140,412	159,154	268,685

Ակնկալվող պարտքային կորստի շարժը բացահայտված է ծանոթագրություն 20 (բ)-ում:

Անվանում	Պայմանագրային գումար	Արժույթ	Պայմանագրի ժամկետը		Տարեկան տոկոսա-դրույք (%)	Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազար դրամ)		Տոկոսային եկամուտ
			Սկիզբ	Ավարտ		Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	
Ժամկետային ավանդներ								
Ինեկոբանկ ՓԲԸ								
Ավանդ DP19/14633	100,000	ԱՄՆ դոլար	23.10.2019	23.04.2021	4.00%	-	-	246
Ավանդ DP20/02356	60,000	ԱՄՆ դոլար	11.02.2020	11.08.2021	3.50%	-	-	627
Ավանդ DP21/11337	60,000	ԱՄՆ դոլար	18.08.2021	18.02.2023	3.00%	28,808	322	322
Ամերիաբանկ ՓԲԸ								
Ավանդ NA099490	100,000	ԱՄՆ դոլար	24.05.2021	24.05.2022	2.70%	48,014	135	789
						76,822	457	1,984

Անվանում	Պայմանագրային գումար	Արժույթ	Պայմանագրի ժամկետը		Տարեկան տոկոսա-դրույք (%)	Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազար դրամ)		Տոկոսային եկամուտ
			Սկիզբ	Ավարտ		Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	
Ժամկետային ավանդներ								
Ինեկոբանկ ՓԲԸ								
Ավանդ DP19/01811	60,000	ԱՄՆ դոլար	11.02.2019	11.02.2020	3.50%	-	-	113
Ավանդ DP19/03403	100,000	ԱՄՆ դոլար	15.03.2019	15.03.2020	4.00%	-	-	352
Ավանդ DP19/10755	60,000	ԱՄՆ դոլար	14.08.2019	14.08.2020	3.50%	-	-	630
Ավանդ DP19/10754	40,000	ԱՄՆ դոլար	14.08. 2019	14.08.2020	3.50%	-	-	420
Ավանդ DP18/14201	60,000	ԱՄՆ դոլար	02.11.2018	02.11.2020	4.00%	-	-	802
Ավանդ DP19/14633	100,000	ԱՄՆ դոլար	23.10.2019	23.04.2021	4.00%	52,259	2,886	2,491
Ավանդ DP20/02356	60,000	ԱՄՆ դոլար	11.02.2020	11.08.2021	3.50%	31,355	975	974
Ավանդ DP20/04148	100,000	ԱՄՆ դոլար	17.03.2020	17.09.2021	3.50%	52,259	1,448	1,448
						135,873	5,309	7,230

7 Անավարտ ծառայություններ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեքսիս խորհրդատվական խումբ	6,663	-	13,878	-
Համայնքների ֆինանսիստների միավորում	4,162	-	8,668	-
«Եվրասիա բարոմետր» համեմատական հետազոտությունների ինստիտուտ	3,994	-	8,318	-
Մեդիա նախաձեռնությունների կենտրոն ՀԿ	3,300	-	6,873	-
Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն	2,434	-	5,069	-
Մեծահասակների կրթության գերմանական միջազգային համագործակցության ինստիտուտ (DVV International)	-	11,992	-	22,947
Համաշխարհային բանկի խումբ	-	7,938	-	15,190
Սիվիլիթաս հիմնադրամ	-	1,798	-	3,441
Մենեջմենթ միսթեմզ ինթերնեյշնլ ինք.	-	1,429	-	2,734
Այլ	2,003	-	4,172	-
	22,556	23,157	46,978	44,312

8 Մնացորդներ բանկում

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ինեկոբանկ ՓԲԸ	659	-	1,373	-
Ամերիաբանկ ՓԲԸ	39,459	311,472	82,182	596,016
	40,118	311,472	83,555	596,016

9 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	1,903	3,437	3,641	7,165
Վերադասակարգում հետաձգված եկամտից (տե՛ս ծանոթագրություն 11)	6,774	-	14,108	
Եկամտի ճանաչում (տե՛ս ծանոթագրություն 13)	(3,026)	(1,534)	(6,006)	(3,136)
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	26	(388)
Տարեվերջի մնացորդ	5,651	1,903	11,769	3,641

10 Կրեդիտորական պարտքեր

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	4,046	2,922	8,427	5,591
Կրեդիտորական պարտքեր ծառայություն մատուցողներին	892	3,155	1,858	6,037
Կրեդիտորական պարտքեր պետական բյուջեին	3,056	-	6,365	-
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	5,159	14,990	10,745	28,684
Նվիրատուներից ստացված կանխավճարներ	4,070	-	8,477	-
Այլ	1,943	2,213	4,046	4,235
	19,166	23,280	39,918	44,547

Նվիրատուներից ստացված կանխավճարները կազմում են 7,500 եվրո, որը ստացվել է Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնից՝ համաձայն 2021թ. դեկտեմբերի 16-ին ստորագրված պայմանագրի: Միջոցները ստացվել են բացառապես Հայաստանում քաղաքացիական հասարակության հանրային ընկալման թեմայով հետազոտական նախագծի իրականացման նախնական ֆինանսավորման նպատակով: Այդ գումարը ենթակա է վերադարձման նվիրատուի պահանջով: Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնը կարող է հաշվանցել ցանկացած գումար, որը նա պարտավոր է

վճարել Հիմնադրամին, համաձայն որևէ այլ պայմանագրի, կանխավճարի ցանկացած գումարի դիմաց:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնի կողմից նման հաշվանցումների պահանջ չի ներկայացվել:

11 Հետաձգված եկամուտ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	163,189	34,219	312,270	71,334
Ավելացում (տե՛ս ստորև)	101,855	204,020	202,169	417,048
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին (տե՛ս ծանոթագրություն 9)	(6,774)	-	(14,108)	-
Եկամտի ճանաչում (տե՛ս ծանոթագրություն 13)	(151,726)	(74,973)	(301,157)	(153,256)
Դոնորներին վերադարձված գումարներ	-	(77)	-	(157)
Համաշահառուներին փոխանցված գումարներ	(59,156)	-	(117,417)	-
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	16,939	(22,699)
Տարեվերջի մնացորդ	47,388	163,189	98,696	312,270

Համաշահառուներին փոխանցված գումարներն իրենցից ներկայացնում են Համայնքային աղքատության կրճատում «Նոու-հաու» ծրագրի իրականացման համար Եվրամիությունից ստացված գումարների մի մասը: Հիմնադրամը չունի վերահսկման և մշտադիտարկման գործառույթներ համաշահառուների գործունեության նկատմամբ և պատասխանատու է միայն այդ միջոցների փոխանցման և Եվրամիությանը ամփոփ հաշվետվությունների ներկայացման համար: Համաշահառուներին փոխանցված ընդհանուր գումարը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 59,156 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո):

Ավելացումները ներկայացնում են հետևյալ կազմակերպություններից ստացված միջոցները՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Միջազգային հարաբերությունների ազգային ժողովրդավարական ինստիտուտ	22,515	17,515	44,689	35,803
ՄԱԿ-ի գենդերային հավասարության ու կանանց հզորացման միավոր	20,076	12,636	39,848	25,830
Ժողովրդավարության ազգային հիմնադրամ	17,051	12,628	33,844	25,814
Եվրասիա հիմնադրամ (ԱՄՆ)	12,512	-	24,835	-
Եվրամիություն՝ ի դեմս Եվրահանձնաժողովի (ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա)	10,388	-	20,619	-
Շվեյցարիայի Համադաշնություն՝ ի դեմս Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի	9,734	-	19,321	-
Շվեդիայի ֆինանսավորում ՀՌԿԿ- Հայաստանին «Հայաստանում ժողովրդավարության իրականացումը բաց տվյալների միջոցով» ծրագիր	3,100	25,036	6,153	51,177
Եվրամիությունը՝ ի դեմս Եվրահանձնաժողովի (Համայնքային աղքատության կրճատում «Նոու-հաու»)	-	128,254	-	262,171
Այլ	6,479	7,951	12,860	16,253
	101,855	204,020	202,169	417,048

Ճանաչված եկամուտներն ըստ նվիրատվությունների ստացման աղբյուրների ներկայացված են ստորև՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտված տարի
Միջազգային հարաբերությունների ազգային ժողովրդավարական ինստիտուտ	15,628	17,515	31,020	35,803
ՄԱԿ-ի գենդերային հավասարության ու կանանց հզորացման միավոր	24,889	7,671	49,402	15,681
Ժողովրդավարության ազգային հիմնադրամ	11,372	25,145	22,572	51,400
Եվրասիա հիմնադրամ (ԱՄՆ)	22,178	11,663	44,021	23,841
Եվրամիությունը՝ ի դեմս Եվրահանձնաժողովի (ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա)	5,488	-	10,893	
Շվեդիայի ֆինանսավորում ՀՌԿԿ-Հայաստանին «Հայաստանում ժողովրդավարության իրականացումը բաց տվյալների միջոցով» ծրագիր	23,253	4,884	46,154	9,984
Եվրամիությունը՝ ի դեմս Եվրահանձնաժողովի (Համայնքային աղքատության կրճատում «Նոու-հաու»)	44,538	-	88,401	
Այլ	4,380	8,095	8,694	16,547
	151,726	74,973	301,157	153,256

Հետաձգված եկամտի մնացորդը ըստ աղբյուրների ներկայացված է ստորև՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Միջազգային հարաբերությունների ազգային ժողովրդավարական ինստիտուտ	5,407	-	11,261	-
ՄԱԿ-ի գենդերային հավասարության ու կանանց հզորացման միավոր	-	4,965	-	9,501
Ժողովրդավարության ազգային հիմնադրամ	5,199	-	10,828	-
Եվրասիա հիմնադրամ (ԱՄՆ)	-	9,818	-	18,787
Եվրամիությունը՝ ի դեմս Եվրահանձնաժողովի (ԵՄ-ն հանուն երիտասարդների. Ուսանողական ժողովրդավարություն հիմա)	3,465	-	7,217	-
Շվեյցարիայի Համադաշնություն՝ ի դեմս Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի	9,326	-	19,424	-
Շվեդիայի ֆինանսավորում ՀՌԿԿ-Հայաստանին «Հայաստանում ժողովրդավարության իրականացումը բաց տվյալների միջոցով» ծրագիր	-	20,152	-	38,562
Ամերիկյան դեսպանատուն Երևանում	2,508	-	5,223	-
Եվրամիությունը՝ ի դեմս Եվրահանձնաժողովի (Համայնքային աղքատության կրճատում «Նոու-հաու»)	21,483	128,254	44,743	245,420
	47,388	163,189	98,696	312,270

12 Զուտ ակտիվներ

Կուտակված արդյունք (անսահմանափակ)

Հիմնադրամի անսահմանափակ արդյունքում ներառված են գործունեության ընթացքում կուտակված գումարները: Հիմնադրամի գործունեության ընթացքում կուտակված արդյունքի գումարների օգտագործմանն առնչվող որևէ օրենսդրական կամ այլ սահմանափակում չկա:

13 Շնորհներից եկամուտ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հետաձգված եկամտից եկամուտ (տե՛ս ծանոթ. 11)	151,726	74,973	301,157	153,256
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթ. 9)	3,026	1,534	6,006	3,136
	154,752	76,507	307,163	156,392

14 Ծառայությունների մատուցումից եկամուտ

Ծառայությունների մատուցումից եկամուտը ներառում է հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացված եկամուտը:

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տեղեկատվական բազայի ստեղծում	77,433	10,438	153,695	21,337
Վերլուծություն և գնահատում	16,304	24,136	32,361	49,338
Սոցիալական հետազոտություններ	4,693	27,343	9,315	55,893
Իրականացված ծրագրերի գնահատում	2,060	-	4,089	-
Խորհրդատվական ծառայություններ	-	23,297	-	47,623
Այլ ծառայություններ	-	18,838	-	38,507
	100,490	104,052	199,460	212,698

15 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(17,992)	27,337	(35,712)	55,881
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	135	-	268	-
	(17,857)	27,337	(35,444)	55,881

16 Շահութահարկի գծով ծախս

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	909	8,579	1,804	17,537
Հետաձգված հարկ	-	-	-	-
	909	8,579	1,804	17,537

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(25,953)		70,937	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2020թ.՝ 18%)	(4,672)	18.0	12,769	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	5,581	(21.5)	(4,190)	(5.9)
Շահութահարկի գծով ծախս	909	(3.5)	8,579	12.1

ԱՄՆ դոլար	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(51,516)		145,006	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2020թ.՝ 18%)	(9,273)	18.0	26,102	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	11,077	(21.5)	(8,565)	(5.9)
Շահութահարկի գծով ծախս	1,804	(3.5)	17,537	12.1

17 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2022թ. փետրվարի 24-ին տեղի ունեցացած Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա արագ ծավալում է ստացել՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման: Բիզնեսի վրա հիմնական ազդեցություններից մի քանիսը կարող են ներառել մատակարարման շղթայի ընդհատումները, ակտիվների արժեզրկումը, աշխատակազմի հասանելիության սահմանափակումը, ճանապարհորդության սահմանափակումը, առևտրի սահմանափակումը, ֆինանսավորում ստանալու անկարողությունը և այլն:

Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, սակայն ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունեն Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա:

18 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

18.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Շնորհների ճանաչում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.6-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար, Հիմնադրամը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կբավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհն ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ դոնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Հիմնադրամի հնարավորության վրա: Եթե ղեկավարության գնահատմամբ Հիմնադրամն ի վիճակի է բավարարելու դրամաշնորհին կից պայմանները և դոնորը պատրաստ է ամբողջովին Հիմնադրամին փոխանցել դրամաշնորհով նախատեսված գումարները, ապա Հիմնադրամը նման դրամաշնորհն անմիջապես ճանաչում է ֆինանսական հաշվետվություններում (որպես դոնորների գծով դեբիտորական պարտք և հետաձգված եկամուտ)՝ այդ դրամաշնորհի պայմանագիրը կնքելու պահին: Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում, ապա կառաջանա ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու անհրաժեշտությունը և այդ ճշգրտումները կարող են էական լինել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների համար:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

19 Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.4-ում:

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով				
Ժամկետային ավանդներ	76,416	140,412	159,154	268,685
Տրամադրված փոխառություններ	-	13,000	-	24,876
Դեբիտորական պարտքեր	17,107	18,755	35,629	35,888
Մնացորդներ բանկերում	40,118	311,472	83,555	596,016
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	133,641	483,639	278,338	925,465

Ֆինանսական պարտավորություններ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով				
Կրեդիտորական պարտքեր	6,881	8,290	14,331	15,863
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	6,881	8,290	14,331	15,863

20 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ռիսկերի կառավարման համակարգ.
Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգ ներդնելու և այն վերահսկելու համար: Խորհուրդը ստեղծել է Ֆինանսների և աուդիտի հանձնաժողով, որը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության մշակման և վերահսկման համար: Հանձնաժողովը կանոնավոր կերպով հաշվետություն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդին իր գործունեության մասին:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականությունը ներդրվել է հայտնաբերելու և վերլուծելու Հիմնադրամի առջև ծառացած ռիսկերը, սահմանելու ռիսկերի չափն ու վերահսկողությունը, վերահսկելու ռիսկերը և պահպանելու դրանց չափը: Ռիսկերի

կառավարման քաղաքականությունն ու համակարգը պարբերաբար վերանայվում է՝ շուկայական պայմանների և Հիմնադրամի գործունեության փոփոխությունները ներկայացնելու համար: Հիմնադրամն իր ուսուցման և կառավարման չափանիշների և ընթացակարգերի միջոցով նպատակ ունի զարգացնել կարգապահ և կառուցողական վերահսկողության միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերերն ու պարտականությունները:

Հիմնադրամի Աուդիտի և ֆինանսների հանձնաժողովը հետևում է, թե ինչպես է ղեկավարությունը վերահսկում Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի համապատասխանությունը և վերանայում ռիսկերի կառավարման համակարգի ճշգրտությունը՝ կապված Հիմնադրամի առջև ծառացած ռիսկերի հետ: Անհրաժեշտության դեպքում ներքին աուդիտը Հիմնադրամի Աուդիտի և ֆինանսների հանձնաժողովին աջակցում է վերահսկողության գործում: Ներքին աուդիտն իրականացնում է ռիսկերի կառավարման վերահսկողության և ընթացակարգերի ինչպես կանոնավոր, այնպես էլ ժամանակավոր ստուգումներ, որոնց արդյունքների մասին զեկուցում է Աուդիտի և ֆինանսների հանձնաժողովին:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Բացի այդ Հիմնադրամն ունի եվրոյով փոխառություն, որը հաշվառվում է ամորտիզացված արժեքով և օգտագործվել է բացառապես Հայաստանում քաղաքացիական հասարակության հանրային ընկալումների վերաբերյալ հետազոտական նախագծի իրականացման նախնական ֆինանսավորման նպատակով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Ժամկետային ավանդներ	76,416	-
Դեբիտորական պարտքեր	8,580	1,523
Մնացորդներ բանկերում	197	19,644
	85,193	21,167
Զուտ արդյունք	85,193	21,167

Հոդված

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Ժամկետային ավանդներ	140,412	-
Մնացորդներ բանկերում	114,613	158,499
	255,025	158,499
Զուտ արդյունք	255,025	158,499

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2020թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2020թ.՝ 10%):

Դրամի արժեզրկումը/արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2020թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Տարվա արդյունք	8,519	25,503	2,117	15,850

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկային մնացորդները, ժամկետային ավանդները, տրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը:

Ղեկավարության գնահատմամբ դեբիտորական պարտքերի և տրված փոխառությունների գծով պարտքային ռիսկը ցածր է, քանի որ Հիմնադրամի փորձը դոնորների հետ ցույց է տալիս, որ Հիմնադրամը հիմնականում ստանում է նախատեսված գումարները:

Ժամկետային ավանդներ և մնացորդներ բանկում

Ակնկալվող պարտքային կորստի տոկոսադրույքները հիմնված են երեք խոշոր վարկային գործակալությունների (Standard & Poor's, Moody's և Fitch) կողմից սահմանված արտաքին վարկանիշային ցուցանիշների վրա: Այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը:

Ժամկետային ավանդների համար ակնկալվող պարտքային կորստի շարժը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Հազար դրամ	Ժամկետային ավանդներ
Կորուստների գծով պահուստը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	502
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	268
Կորուստների գծով պահուստը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	770
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	93
Կորուստների գծով պահուստը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	863

Բանկային մնացորդների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերը հեղինակավոր բանկ է (Ինեկոբանկ ՓԲԸ), որի պարտքային վարկանիշը B2 է՝ ըստ Moody's Investors Service-ի:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից և դոնորներից ստացման ենթակա շնորհների մասով ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները: Հիմնադրամի դրամական միջոցները (ներառյալ բանկային ավանդները) գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

21 Պայմանականություններ

21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Այս համատեքստում Հիմնադրամն ունի համապատասխան ապահովագրական ծածկույթ. ունի ապահովագրություն (ա) ընդհանուր պարտավորությունների համար, (բ) հանցագործության, տնօրենների և պաշտոնյաների հանցանքների պարտավորությունների համար, և (գ) գույքի համար:

21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22 Կապակցված կողմեր

Հիմնադրամի հետ կապակցված կողմեր են հանդիսանում Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները և գործադիր տնօրենը:

22.1 Գործարքներ ղեկավարության հետ

Ստորև բերված աղյուսակում ամփոփված է հաշվետու տարվա ընթացքում գործադիր տնօրենի կողմից ստացված վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ	17,084	13,439	33,910	27,472

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.06.2022 10:43